

# Քարտով կատարված գործարքների բողոքարկման կարգ

Քարտի օգտագործման յուրաքանչյուր ամսվա համար Բանկը՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը, Հաճախորդին տրամադրում է Քարտային Հաշվի քաղվածք՝ պլաստիկ քարտի տրամադրման հայտում նշած եղանակով:

Եթե քաղվածքի ուղարկումից հետո 1 /մեկ/ տարվա ընթացքում, Հաճախորդից չի ստացվել ոչ մի առարկություն հաշվի մնացորդի և շարժի վերաբերյալ, ապա քաղվածքը համարվում է ճշգրիտ: Հակառակ դեպքում Բանկն իրավունք ունի մերժել նշված ժամկետից ուշ ստացված բողոքները:

Եթե եղել են առարկություններ հաշվի մնացորդի և շարժի վերաբերյալ, Հաճախորդը դիմում է Բանկին և լրացնում է համապատասխան բողոքարկման հայտը/տե՛ս բողոքարկման հայտը/:

Եթե բանկումատը չի տրամադրել կամ նվազեցրել է քարտային հաշվից այդ գումարը ապա անհրաժեշտ է այցելել բանկ և լրացնել համապատասխան բողոքարկման հայտը/տե՛ս բողոքարկման հայտը/:

Վերոնշյալ դեպքերում հաճախորդի դիմումը փոխանցում է համապատասխան աշխատակցին, որն էլ, քարտով գործառնությունների վերաբերյալ լրացուցիչ բացատրությունների ստանալու, և անհրաժեշտության դեպքում նաև ետզանձում իրականացնելու նպատակով ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ: